ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2011թ. սեպտեմբերի 6 թիվ 88 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՇԱՄԻՐԱՄ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 77.2 հոդվածի 2-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետով՝ *կարգադրում եմ.*

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Շամիրամ համայնքում «Հազարամյակի մարտահրավերներ - Հայաստան» կորպորացիայի կողմից կատարվող աշխատանքների համաֆինանսավորման ընթացքը, համայնքի տարեկան բյուջեի եկամուտները և ծախսերն ուսումնասիրելու համար ստեղծել հանձնաժողով համաձայն հավելվածի:
2. Ուսումնասիրություն կատարել 2011 թվականի սեպտեմբերի 7-ից 14-ը և արդյունքների մասին տեղեկացնել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետին:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ս. ՍԱՀԱԿՅԱՆ

Հավելված
ՀՀ Արագածոտնի մարզպետի
2011թ. սեպտեմբերի 6-ի թիվ 88-Ա կարգադրության

ԿԱԶՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՇԱՄԻՐԱՄ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Ս. Հովսեփյան - ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ, հանձնաժողովի նախագահ

Կ. Ժամհարյան - ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության Ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ

Գ. Օհանյան - ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի-մարզային հողային պետական տեսչության պետ

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ